




**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

« 27 » հուլիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ  Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-03/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2015թ. թիվ 1/73-1/21224-15 գրությամբ ներկայացված «Սաթման» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01248095) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայքրմուլկյուլի» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.08.2015թ. թիվ ՊԼ 1-04/1632 գրության հիման վրա, 10.08.2015թ. թիվ 1/73-1/21224-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել

«Սաթման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված կազմակերպությանը Ցուցակում ներառելու համար:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում, պարզվել է, որ «Սաթման» ՍՊԸ-ն մասնակցելով «Հայքրմուդկոյուդի» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/26» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, հայտի N 2 հավելվածով Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (24.07.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ նշումով, որ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային տեսչության կողմից Ընկերությանը պահանջ է ներկայացվել 2013թ. ԱԱՀ-ի վճարող համարվելու և շրջանառության հարկի ճշգրտման վերաբերյալ, որը գտնվում է վիճարկման փուլում:

Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 28.07.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Սաթման» ՍՊԸ-ի կողմից 2015թ. հուլիսի 24-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Սաթման» ՍՊԸ-ն 2015թ. հուլիսի 24-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա

դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 177049 ՀՀ դրամի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը 04.02.2016թ. թիվ 01/04.1/292-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալը դեռևս չի հանդիսանում Ընկերության կողմից Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում, ուստի «Սաթման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու բավարար հիմքեր առկա չեն:

Սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունը, 17.02.2016թ. թիվ 1/73-1/5641-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ բացառությամբ Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով: Այսինքն, Օրենքի հիշյալ նորմի ուժով անկախ հարկատեսակից մրցակցային գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն ՀՀ հարկային վճարների գծով ժամկետանց պարտքեր ունեցող անձինք:

Նախարարությունը վերոգրյալով պայմանավորված և նկատի ունենալով, որ ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի հարկային տեսչության 12.02.2016թ. թիվ 4-6/[1052344]-16 գրության համաձայն՝ «Սաթման» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01248095) 24.07.2015թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, հետ է վերադարձրել Կենտրոնի գրությունը և հայտնել, որ անհրաժեշտ է նշված գործընթացի մասով կազմակերպել բողոքարկման գործընթաց:

2. «Սաթման» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 12.08.2015թ. թիվ 01/04.1/2047-15 գրությամբ դիմել է «Սաթման» ՍՊԸ-ին:

«Սաթման» ՍՊԸ-ն 18.08.2015թ. թիվ 026/15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 2015թ. մայիսի 26-ին ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչությունից ստացել է ծանուցագիր՝ Ընկերության 2013թ. ԱԱՀ վճարող համարվելու ու ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների ճշգրտման վերաբերյալ: Քանի որ Ընկերությունը 2013թ.-ից սկսած՝ պատշաճ ձևով կատարել է իր հարկային պարտավորությունները, այդ իսկ պատճառով օրենքով սահմանված կարգով դիմել է ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչություն՝ ներկայացնելով համապատասխան հիմքեր 2013թ.-ից ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը մասնակցել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԳՆԶՏՊԿ-ՀԶԿԸ-ՇՀԱՊԶԲ-15/15-15/26» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը գրությամբ հայտնել է նաև, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի N 2 հավելվածում որպես վերապահում նշել է, որ ՀՀ ՖՆ հարկային տեսչության կողմից Ընկերությանը պահանջ է ներկայացվել 2013թ. ԱԱՀ-ի վճարող համարվելու և շրջանառության հարկի ճշգրտման վերաբերյալ, որն այժմ գտնվում է վիճարկման փուլում:

Հետևաբար, Ընկերությունը նշել է, որ տեղեկացված լինելով Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, կեղծ տեղեկություն չի տրամադրել՝ պարզ ու հստակ նշելով հնարավոր ժամկետանց հարկային պարտքի մասին:

3. «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 04.08.2015թ. թիվ ՊԼ1-04/1632 գրությամբ հայտնել է, որ քիմիական նյութերի

ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/26» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սաթման» ՍՊԸ-ն հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ 24.07.2015թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով: Միևնույն ժամանակ նույն հավելվածում նշել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային տեսչության կողմից Ընկերությանը պահանջ է ներկայացվել 2013թ. ԱԱՀ-ի վճարող համարվելու և շրջանառության հարկի ճշգրտման վերաբերյալ, որն այժմ գտնվում է վիճարկման փուլում:

Պատվիրատուն նշել է, որ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 28.07.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Սաթման» ՍՊԸ-ի կողմից 2015թ. հուլիսի 24-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, ըստ որի «Սաթման» ՍՊԸ-ն 2015թ. հուլիսի 24-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 177049 ՀՀ դրամի չափով:

4. ՍՑ-ԳԲԽ-03/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2015թ. թիվ 1/73-1/21224-15 գրությամբ ներկայացված «Սաթման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/26» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սաթման» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (24.07.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ նշումով, որ ՀՀ ՖՆ հարկային տեսչության կողմից Ընկերությանը պահանջ է ներկայացվել 2013թ. ԱԱՀ-ի վճարող համարվելու և շրջանառության հարկի ճշգրտման վերաբերյալ, որն այժմ գտնվում է վիճարկման փուլում:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.07.2015թ. տեղի ունեցած նիստի N 15/26-3 արձանագրության 3.2-րդ կետով որոշում է կայացրել Ընթացակարգի 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Սաթման» ՍՊԸ-ին:

4. Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 28.07.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Սաթման» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Սաթման» ՍՊԸ-ն 2015թ. հուլիսի 24-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 177049 ՀՀ դրամի չափով:

6. ՀՀ ֆինանսների նախարարությունը, 17.02.2016թ. թիվ 1/73-1/5641-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է «Սաթման» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01248095) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կազմակերպել բողոքարկման գործընթաց:

5. ՍՑ-ԳԲԽ-03/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2015թ. թիվ 1/73-1/21224-15 գրությունը և կից փաստաթղթերի պատճենները, «Հայքրմուլկոյուղի» ՓԲԸ-ի ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 04.08.2015թ. թիվ ՊԼ1-04/1632 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչության 26.05.2015թ. ծանուցագիրը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում **գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, «Հայքրմուլկոյուղի» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/26» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

«Սաթման» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (24.07.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, միևնույն ժամանակ նշել է նաև, որ ՀՀ ՖՆ հարկային տեսչության կողմից Ընկերությանը պահանջ է

ներկայացվել 2013թ. ԱԱՀ-ի վճարող համարվելու և շրջանառության հարկի ճշգրտման վերաբերյալ, որն այժմ գտնվում է վիճարկման փուլում:

Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 28.07.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Սաթման» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Սաթման» ՍՊԸ-ն 2015թ. հուլիսի 24-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 177049 ՀՀ դրամի չափով:

«Սաթման» ՍՊԸ-ն 18.08.2015թ. թիվ 026/15 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչության 26.05.2015թ. ծանուցագիրը, որով առաջարկվել է Ընկերությանը 5 օրյա ժամկետում ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչություն ներկայացնել Ընկերության 2013թ. հունվարի 1-ից ԱԱՀ վճարող համարվելու հիմքերը: Ընկերությունը նույն գրությամբ հայտնել է նաև, որ 2013թ.-ից սկսած պատշաճ ձևով կատարել է իր հարկային պարտավորությունները, այդ իսկ պատճառով, օրենքով սահմանված կարգով դիմել է ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչություն՝ ներկայացնելով համապատասխան հիմքեր 2013թ.-ից ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Սաթման» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի N 2 հավելվածում նշելով այն մասին, որ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային տեսչության կողմից Ընկերությանը պահանջ է ներկայացվել 2013թ. ԱԱՀ-ի վճարող համարվելու և շրջանառության հարկի ճշգրտման վերաբերյալ, որն այժմ գտնվում է վիճարկման փուլում՝ կեղծ տվյալ չի տրամադրել, ըստ էության չբացառելով հնարավոր ժամկետանց հարկային պարտքի մասին:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ նման փաստական հանգամանքների պայմաններում Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալը դեռևս չի հանդիսանում Ընկերության կողմից Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին

մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2015թ. թիվ 1/73-1/21224-15 գրությամբ նախաձեռնած «Սաթման» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01248095) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգը մերժել:


«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-03/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Գրիգորյան